



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԲՆԱՊԱՌԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



*Ա. Մինասյան*

«23» 01 2017 թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 03

Ձեռնարկողը՝

**«Մառա և դուսպրեր» ՍՊԸ**

Ք. Երևան, Փ. Բուզանդի փող. 1/3

Գործունեությունը՝

**Երևանի Ռաֆայել Իշխանյանի անվան թիվ 153  
դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա  
ազդեցության նախնական գնահատման հայփ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կեստրոն» ՊՈԽ-ի  
տնօրեն՝



Վ. Սահակյան

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 03

«23» 01 2017թ.

**«Մառա և դուստրեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ռաֆայել Իշխանյանի  
անվան Երևանի թիվ 153 դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝

«Մառա և դուստրեր» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ, կից փաստաթղթեր

Տեղադրման վայրը՝

ք. Երևան

Գործունեության կատեգորիան՝ «Գ»

Երևանի թիվ 153 դպրոցի կառուցումն իրականացվելու է սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում՝ Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ: Դպրոցը նախատեսված է կառուցել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Առաքելյան փողոցի հ. 47ա հասցեում: Նոյն Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոցի մասնաշենքերի քանդման աշխատանքներն իրականացվել են ՀՀ Կառավարության 25.08.2016թ. թիվ 862-Ա որոշման համաձայն:


Կառուցապատման ենթակա տարածքն ունի 2615մ<sup>2</sup> մակերես, իսկ ընդհանուր հողատարածքը՝ 8420.2մ<sup>2</sup>: Ըստ նախազգային տվյալների, դպրոցը բաղկացած է լինելու սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով միացված 4 մասնաշենքերից, որոնք կունենան 793.5, 1160.3, 284.5, 376.7մ<sup>2</sup> մակերեսներ: Դպրոցը նախատեսված է 600 աշակերտի համար:

Մասնաշենքերից երկուսում կկառուցվեն թվով 26 դասասենյակներ, աշխատանքային և լաբորատոր սենյակներ, մեկական ճաշասենյակ: Երրորդ մասնաշենքը կծառայի որպես մարզադաշտ(8.2մ ընդհանուր բարձրությամբ), որտեղ կլինեն 2 հանդերձարաններ՝ լողասենյակներով և սանհանգույցով, իսկ չորրորդը կծառայի որպես հանդիսության սրահ: Ուսումնական մասնաշենքերը բաղկացած կլինեն 3 վերգետնյա հարկերից, որոնք կունենան համապատասխանաբար 3.6մ, 3.3մ, 3.3մ բարձրություն:

Դպրոցի համալիրը կունենա մեկ սպորտային գոտի՝ 660մ<sup>2</sup> մակերեսով և կաթսայատուն, որի զբաղեցրած տարածքը կլինի 37մ<sup>2</sup>:

Տարածքի կանաչ և ասֆալտապատ գոտիների մակերեսները համապատասխանաբար 1050 և 2290մ<sup>2</sup> են: Համաձայն նախագծի, կպահպանվեն գոյություն ունեցող ծառերը(56) և կտնկվեն նաև նորերը: Շուրջ 700քմ տարածքի վրա նախատեսված է իրականացնել կանաչապատման աշխատանքներ՝ ստեղծել սիզամարգեր, որոնք հետագայում կհամալրվեն գեղագարդ բուսատեսակներով, որի հետագա խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը:

Կառավարության վեհական գործադրության մասին  
ՀՀ վարչապետի կողման  
20.01.17թ.



Մասնաշենքերի տանիքները նախատեսվում է կառուցել լանջավոր, փայտյա ծպեղային համակարգով, ծածկույթն՝ ալիքավոր ցինկապատ թիթեղով, որը կունենա կազմակերպված արտաքին շրահեռացում:

Զրամատակարարումն ու շրահեռացումը կիրականացվի նախկինում գործող դպրոցի տարածքում առկա համակարգերի միջոցով: Այսինքն, շրամատակարարումը կլինի Առաքելյան փողոցով անցնող 300մմ տրամագիծ ունեցող քաղաքային շրագձից, իսկ շրահեռացման և կոյուղու համար՝ 200մմ տրամագծով մոտ 40մ երկարությամբ խողովակը կմիացվի քաղաքային կոյուղագծին: Նախագիծը համաձայնեցվել է <<Երևան Զուր>> ՓԲԸ կողմից 30.09.2016թ. տրված N6989 տեխնիկական պայմաններին:

Դպրոցի չեռուցումը կիրագործվի նորակառույց կաթսայատան միջոցով, որի առանցքային չափերը կլինեն 5000x7400մմ: Կաթսայատան շահագործումը կիրականացվի շրային երկու կաթսաների միջոցով, բնական զազի այրմամբ՝ 8000 կկալ/մ<sup>3</sup> ջերմությամբ: Բնական զազի առավելագույն ծախսը յուրաքանչյուր կաթսայի համար գնահատվում է 50.6մ<sup>3</sup>/ժ:

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագագերի հեռացումը կկատարվի 350մմ տրամագծով և 14մ բարձրությամբ ծխնելույզի միջոցով:

Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսայի և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում շրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է, քանի որ կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում: Համաձայն մթնոլորտային օդ արտանետված վնասակար զազերի հաշվարկային արդյունքների, կաթսայատան շահագործման ընթացում դրանց գետնամերձ քանակները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում: Մասնաշենքերում նախատեսված է արհեստական շրջանառությամբ, երկխողովականի հորիզոնական մատակարարումով ջերմատարի փակուղային շարժումով ջեռուցման համակարգ: Զերմատարը, յուրաքանչյուր հարկում, հատակի վրայով անցնող մատակարարող խողովակներով բաշխվելու է ջեռուցման մարտկոցներին(առանձին-առանձին):

Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ ինչպես արհեստական եղանակով, այնպես էլ բնական ճանապարհով: Մեխանիկական ներծծման և արտածման օդափոխությունը նախատեսված է միջանցքների, բուֆետի, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճների համար: Մեխանիկական արտածում նախատեսված է նաև քիմիայի և ֆիզիկայի դասասենյակների քարշիչ պահարանների համար: Բնական արտածումը կիրականացվի դասարանների և աշխատասենյակների համար:

Դպրոցի հանդիսությունների դահլիճի, մարզադահլիճի, պարասրահի, արհեստանոցների և բուֆետի համար նախատեսված են մեխանիկական դրդմամբ օդափոխության ներածման և արտածման համակարգեր: Օդափոխության համար կօգտագործվեն "REMAK" ֆիրմայի կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել համարժեք պարամետրերի այլ տեսակներով: Դահլիճների օդափոխության համակարգերի սարքավորումները կտեղադրվեն ձեռնահարկում, իսկ բուֆետինը, խոհանոցինը և արհեստանոցներինը՝ առաջին հարկի առաստաղի տակ:

Մնացած դասասենյակներում իրականացվելու է բնական արտածում: Բնական արտածման օդատարերը բարձրանալու են ձեռնահարկում(1մ) և ծածկվելու են մետաղական ցանցով: Սանհանգույցների օդատարերը հորաններով բարձրանալու են տանիքից 1մ վերև: Օդի ներածումը և արտածումը կատարվելու է կարգավորիչ ճաղավանդակների միջոցով: Օդափոխության համար նախատեսվում է օգտագործել

ցինկապատ օղատարեր, որոնք տանիքից դուրս կջերմամեկուսացվեն ֆոլզապատ ապակե բամբակով: Նախագծված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել հետևյալ ծավալներով հողային աշխատանքներ.

- դպրոցի շենքի փոստրակի մշակում,
- կաթսայատան խրամուղու մշակում,
- ընդհանուր հանույթի տեղափոխում՝  $4382\text{m}^3$ ,
- ետլիցքի համար բերվող գրունտ՝  $4048\text{m}^3$ :

Հաշվի առնելով գրունտի երկրաբանական տվյալները, այն հնարավոր չէ հետազայում վերաօգտագործել հողային բարեկարգման աշխատանքներում: Ուստի, ետլիցքի համար անհրաժեշտ գրունտը նախատեսվում է ձեռք բերել համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպությունից:

Հողային հանույթը ( $4382\text{m}^3$ ) կտեղափոխվի մոտ 13կմ հեռավորության վրա Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող Երևանի քաղաքապետարանի աղբավայր՝ համաձայն լիցենզավորված ընկերության հետ պայմանագրի և քաղաքապետի որոշման (30.06.2016թ. թիվ Ն2391-Ա):

Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականցվի  $0.4\text{kVt}$  օդային մալուխային գծից:

Շինարարական իրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, շարժական տնակը և այլն կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում: Տարածքը ցանկապատվելու է, որը լինելու է դոռք տիպի և մետաղական էլեմենտներով պատրաստված:

Կառուցապատման տեղանքում ուղիեցի բարձրությունների տարբերությունը՝ 1կմ շառավղով տարածքի վրա, չի գերազանցում  $50\text{m}$ : Բնութագրվող տարածքը ծովի մակարդակից գտնվում է  $1050\text{m}$  բարձրության վրա և շենքի ճարտարապետական լուծումը համապատասխանեցվել է տեղանքի ուղիեցին:

Կլիմայական տեսակետից Երևանին բնորոշ են չոր և շոգ ամառներ և ցուրտ ձմեռներ: Օդի հարաբերական խոնավության միջին տարեկան արժեքը կազմում է  $61\%$ , բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝  $41^\circ\text{C}$ , նվազագույնը՝  $-30^\circ\text{C}$ , տեղումների քանակը՝  $302\text{mm}$ :


Դպրոցի տարածքն ու հարակից վայրերն արդեն իսկ յուրացված և ուրբանացված են, որտեղ առկա չեն վայրի բուսական ու կենդանական տեսակներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը ներկայացվում է երկու փուլերով՝ շինարարության և շահագործման:

Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ՝ հողային աշխատանքների ընթացքում, որի տևողությունը լինելու է մոտ 4 ամիս: Նշանակած արտանետումները կլինեն տեղայնացված և ենթակա արագ ցրման:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման շնորհիվ, շինարարական աղմուկի և թրթումների մակարդակը չի գերազանցի  $\pm 2$  սահմանված նորմերը: Առկա ազդակիրների (բնակելի և հասարակական շենքեր) հեռավորությունը շինտարածքից մոտ  $10-30\text{m}$  է:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրն օգտագործվելու է շինհրապարակի ջրանման, մաքրման և կապալառուի աշխատակազմի կենցաղային



կարիքների համար: Իսկ շիանարարության ընթացում անհրաժեշտ ջրի քանակը՝ 0.45լ/վրկ, նախատեսվում է վերցնել տարածքում գոյություն ունեցող ջրագծից:

Շինհրապարակի մակերեսներն ու ջրահեռացումը կկազմակերպվի այնպես, որ բացառվեն արտահոսքերը:

Առաջացած թափոններն ու շինադր կանոնավոր կույտերի տեսքով ժամանակավորապես կկուտակվեն շինհրապարակի հատուկ հատկացված մասում, այնուհետև պարբերաբար կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված ադրավայր:

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կնվազեցնի կամ կրացանի հնարավոր արտանետումներն ու արտահոսքերը: Շինարարական մեքենաների, բեռնատարների երթևեկությունը կվազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ: Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: Բայ աղմկահարույց աշխատանքները կիրականացվեն հնարավորինս օրվա ցերեկային ժամերին: Տարածքում կտեղադրվեն տեղեկացնող, մուտքն արգելող նշաններ և ցուցանակներ, որպիսի բացառվեն կողմանկի անձանց մուտքերն ու խուսափեն արտակարգ իրավիճակներից: Դպրոցի շենքի դիմաց առկա հուշարձանը կմեկուսացվի և կունենա համապատասխան պահպանում՝ ողջ շինարարության ընթացքում:

Հետշինարարական փուլում հնարավոր բնապահպանական ազդեցությունները կարող են առաջանալ ջեռուցման շրջանում՝ կաթսայատան շահագործման ընթացքում։ Սակայն, համաձայն արտանետվող վտանգավոր նյութերի քանակների հաշվարկի, դրանք կգտնվեն թույլատրելի նորմերի սահմաններում։

**Եզրականգում.** Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են համապատասխան միջոցառումներ՝ միանուրատային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վերաբերյալ:

Իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմերի սահմաններում են:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հականություն են տվել նախազծի իրականացմանը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մառա և դուստրեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ռ. Իշխանյանի անվան Երևանի թիվ 153 դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Ապահովագիր



Ն. Ռոստովյան